**Հավելված №1**
Սահմանված է
Հայաստանի Հանրապետության հանրային
ծառայությունները կարգավորող հանձնաժողովի
2020 թվականի ----------ի №---Ա որոշմամբ

# Կ Ա Ր Գ
# «ՎԵՈԼԻԱ ՋՈՒՐ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԵՎ ՋՐԱՀԵՌԱՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻՆ ՆՈՐ ՄԻԱՑՄԱՆ ԿԱՄ ՄԻԱՑՄԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ

1. Սույն կարգը սահմանում է «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերության կողմից (այսուհետ՝ Ընկերություն) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով) ջրամատակարարման և ջրահեռացման համակարգին նոր միացման կամ միացման փոփոխության գործընթացի իրականացման վերաբերյալ տեղեկատվության (այսուհետ՝ Տեղեկատվություն) ներկայացման ընթացակարգը:
2. Տեղեկատվությունը ներկայացվում է եռամսյակային կարգով՝ մինչև հաշվետու եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը:
3. Ընկերությունը Տեղեկատվությունը ուղեկցող գրությամբ Հանձնաժողով է ներկայաց-նում առձեռն, փոստային կամ էլեկտրոնային եղանակով:
4. Առձեռն կամ փոստային եղանակով ներկայացման դեպքում Տեղեկատվությունը Հանձնաժողով է ներկայացվում նաև invest.report@psrc.am էլեկտրոնային հասցեին՝ սույն կարգի 6-րդ կետում նշված ֆորմատներով:
5. Էլեկտրոնային եղանակով Տեղեկատվությունը ներկայացվում է փաստաթղթերի էլեկտրոնային շարժի համակարգի (Mulberry) կամ Հանձնաժողովի պաշտոնական ինտերնետային կայքի (www.psrc.am) առցանց հաշվետվությունների հանձնման էլեկտրոնային համակարգի միջոցով: Հանձնաժողովի պաշտոնական ինտերնետային կայքի առցանց հաշվետվությունների հանձնման էլեկտրոնային համակարգի միջոցով Տեղեկատվությունը ներկայացվում է Հանձնաժողովի սահմանած կարգով:
6. Փաստաթղթերի էլեկտրոնային շարժի համակարգով (Mulberry) Տեղեկատվությունը ներկայացվում է XLS (իքսէլէս), XLSX (էքսէլէսիքս) կամ ODS (օդիէս) ֆորմատների

ֆայլերի տեսքով, հայկական unicode (յունիկոդ) տառատեսակով, իսկ այլ տվյալներ ներկայացնելու համար կիրառելի են DOC (դոկ), DOCX (դոկիքս) կամ PDF (փիդիէֆ) ֆորմատները:

7. Առձեռն եղանակով ներկայացման դեպքում Տեղեկատվության ներկայացման օր է համարվում Հանձնաժողովում Տեղեկատվության և ուղեկցող գրության փաստացի մուտքագրման օրը, փոստային եղանակով ներկայացման դեպքում՝ Տեղեկատվության և ուղեկցող գրության փոստային բաժանմունքում ընդունվելու օրվա օրացուցային կնիքի արտատիպում նշված օրը, փաստաթղթերի էլեկտրոնային շարժի համակարգով (Mulberry) ներկայացման դեպքում՝ Տեղեկատվության և ուղեկցող գրության էլեկտրոնային առաքման օրը, իսկ Հանձնաժողովի պաշտոնական ինտերնետային կայքի առցանց դիմումների և հաշվետվությունների հանձնման էլեկտրոնային համակարգի միջոցով ներկայացման դեպքում՝ այդ համակարգի կողմից ինքնաշխատ եղանակով հաշվետվություններ ներկայացրած անձին հաշվետվությունների ստացումը և գրանցումը հավաստող համապատասխան էլեկտրոնային ծանուցման մեջ նշված օրը:
8. Հանձնաժողով ներկայացված Տեղեկատվությունում սահմանված ձևերին անհամապատասխանությունների, անճշտությունների կամ բացթողումների առկայության դեպքում Ընկերությունը Հանձնաժողովի կողմից տեղեկացվում է այդ մասին և տեղեկացվելու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում Հանձնաժողով է ներկայացնում ճշգրտված Տեղեկատվություն կամ Տեղեկատվությանն առնչվող լրացուցիչ պարզաբանումներ:
9. Տեղեկատվության կազմման համար անհրաժեշտ սկզբնական հաշվառման փաստաթղթերում անորոշությունների, անճշտությունների և այլ վիճահարույց տվյալների առկայության, կամ տարբեր պատճառներով այդ փաստաթղթերի վավերացված չլինելու դեպքում Ընկերությունը սկզբնական հաշվառման առկա փաստաթղթերի կամ իր կողմից առավել արժանահավատ համարվող ցուցանիշների հիման վրա լրացնում և Հանձնաժողովի կողմից սահմանված ժամկետներում Տեղեկատվությունը ներկայացնում է Հանձնաժողով, իսկ հետագայում նոր հիմնավոր փաստերի առկայության կամ սկզբնական հաշվառման փաստաթղթերում փոփոխությունների կատարման դեպքում Տեղեկատվությունում կատարում է փոփոխություններ և Հանձնաժողով է ներկայացնում ճշգրտված Տեղեկատվություն:

10. Հանձնաժողով ներկայացված Տեղեկատվությունում Ընկերության կողմից սխալների ինքնուրույն հայտնաբերման դեպքում նա վերջինս կարող է ներկայացնել ճշգրտված Տեղեկատվություն: Սույն կարգի կիրառության իմաստով՝ հաշվետու ժամանակաշրջանի համար ներկայացված մեկից ավելի Տեղեկատվությունից առաջինը համարվում է հաշվետու ժամանակաշրջանի համար ներկայացված, իսկ մյուսները՝ ճշգրտված:

Հավելված №2

Սահմանված է
Հայաստանի Հանրապետության հանրային
ծառայությունները կարգավորող հանձնաժողովի
2020 թվականի ----------ի №---Ա որոշմամբ
Ձև-1

**Տեղեկատվություն ջրամատակարարման և ջրահեռացման համակարգին նոր միացման կամ միացման փոփոխության ժամկետների վերաբերյալ**

առ ________________ 20..թ.

| № | Դիմողի անվանումը (ֆիզիկական անձի դեպքում՝ անուն ազգանունը) | Դիմելու ամսաթիվը | Դիմողի հեռախոսահամարը | Մարզը | Համայնքը, բնակավայրը, հասցեն | Կառուցվող կառույցի նախատեսվող օգտագործումը (ն), առավելագույն ծախսը (մ3) և ճնշումը (մ) | Նոր համակարգի ջրամատակարարման կամ ջրահեռացման համակարգերի կառուցման անհրաժեշտությունը (ն) | Ողջամիտ կառուցման անհրաժեշտությունը (ն) | Տեխնիկական պայմանների տրամադրման անհրաժեշտությունը (ն) | Տեխնիկական պայմանների տրամադրման կամ միացման պայմանագրի կնքման ամսաթիվը | Դիմող անձի կողմից կառուցման աշխատանքների ավարտման և ընդունման ամսաթիվը | Դիմողից միացման պայմանագրի և միացման վճարի 80%-ի վճարման ամսաթիվը | Միացման պայմանագրի համարը | Նախագծման աշխատանքներ | | Շինարարական աշխատանքներ | | Ծառայությունների մատուցման պայմանագրի կնքման ամսաթիվը | Ջրամատակարարման և(կամ) ջրահեռացման համակարգին միացման ամսաթիվը | Փաստացի վճարում (հազ. ՀՀ դրամ) | Ծառայությունների մատուցման սկզբի ամսաթիվը | Նշումներ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | | | | | | | Փաստացի սկիզբի ամսաթիվը | Փաստացի ավարտի ամսաթիվը | Փաստացի սկիզբի ամսաթիվը | Փաստացի ավարտի ամսաթիվը | | | | | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 | 17 | 18 | 19 | 20 | 21 | 22 | 23 |
| 1 | **Ֆիզիկական անձ կամ ոչ արտադրական նպատակով ծառայությունների մատուցման համար դիմած իրավաբանական անձ** | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 1) | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 2) | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| … | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| n) | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 2 | **Արտադրական նպատակով ծառայությունների մատուցման համար դիմած իրավաբանական անձ** | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 1) | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 2) | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| … | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| n) | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 3 | **Նոր կառուցվող շենք կամ թաղամաս** | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 1) | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| 2) | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| … | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| n) | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |

1. Տեղեկատվությունը ներկայացվում է սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից մինչև հաշվետու եռամսյակի վերջին օրը ջրամատակարարման և ջրահեռացման համակարգին միանալու դիմում ներկայացրած և հաշվետու ժամանակաշրջանի սկզբի դրությամբ ծառայությունների մատուցման պայմանագիր չկնքած դիմողների մասով, իսկ դիմող անձի կողմից նոր համակարգի կառուցման վերաբերյալ տեղեկատվությունը՝ 2018 թվականի ապրիլի 1-ից:
2. Տեղեկատվության 12-րդ սյունակը լրացվում է, երբ Նոր համակարգի կառուցումն իրականացվում է Դիմող անձի կողմից:
3. Տեղեկատվության ամսաթվեր պարունակող սյունակները լրացվում են "DATE" 31/12/17 ձևաչափով:
4. Տեղեկատվության մեջ դրամական մեծությունները ներկայացվում են ավելացված արժեքի հարկը ներառյալ:

Ձև-2

**Տեղեկատվություն ջրամատակարարման և ջրահեռացման համակարգին նոր միացման կամ միացման փոփոխության ուղղությամբ իրականացվող ծախսումների վերաբերյալ**

առ _________________ 20..թ.

| № | Դիմողի անվանումը (ֆիզիկական անձի դեպքում՝ անուն ազգանունը) | Մարզը | Համայնքը, բնակավայրը, հասցեն | Կառուցվող խողովակի երկարությունը (մ), տրամագիծը (մմ) և տիպը | Միացման պայմանագրի կամ տեխնիկական պայմանի համարը | Միացման վճարը (հազար ՀՀ դրամ) | Միացման նախահաշվային արժեքը (հազար ՀՀ դրամ) | Միացման նպատակով իրականացված փաստացի ծախսումներ (հազար ՀՀ դրամ) | Նշումներ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 |
| 1 | | | | | | | | | |
| 2 | | | | | | | | | |
| 3 | | | | | | | | | |
| ... | | | | | | | | | |
| n | | | | | | | | | |

1. Տեղեկատվությունը ներկայացվում է հաշվետու եռամսյակի ընթացքում ծառայությունների մատուցման պայմանագիր կնքած դիմողների մասով:
2. Ամսաթվեր պարունակող սյունակները լրացվում են "DATE" 31/12/17 ձևաչափով:
3. Տեղեկատվության մեջ դրամական մեծությունները (բացառությամբ 9-րդ սունյակի) ներկայացվում են ավելացված արժեքի հարկը ներառյալ:

Ձև-3

## Տեղեկատվություն ջրամատակարարման և ջրահեռացման համակարգին ժամանակավոր բաժանորդների միացման գործընթացի վերաբերյալ

առ _______________ 20..թ.

| № | Ժամանակավոր բաժանորդի անուն ազգանունը | Արձանագրության համարը | Արձանագրության ամսաթիվը | Արձանագրությամբ հաշվարկված գումարը (ՀՀ դրամ) | Արձանագրության վերջնական վճարման ամսաթիվը | Դիմելու ամսաթիվը | Ժամանակավոր պայմանագրի կնքման ամսաթիվը | Մարզը | Համայնքը, բնակավայրը, հասցեն | Դիմումի մերժման ամսաթիվը | Ժամանակավոր պայմանագրի Մշտական պայմանագրի վերաձևակերպման ամսաթիվը | Ժամանակավոր պայմանագրի Մշտական պայմանագրի մերժման ամսաթիվը | Ժամանակավոր պայմանագրի վերաձևակերպման ժամկետը (օր) | Նշումներ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 |
| 1 | | | | | | | | | | | | | | |
| 2 | | | | | | | | | | | | | | |
| 3 | | | | | | | | | | | | | | |
| ... | | | | | | | | | | | | | | |
| n | | | | | | | | | | | | | | |

1. Տեղեկատվությունը ներկայացվում է հաշվետու եռամսյակի ընթացքում ժամանակավոր պայմանագիր կնքելու համար դիմողների մասով:
2. Ամսաթվեր պարունակող սյունակները լրացվում են "DATE" 31/12/17 ձևաչափով:
3. Տեղեկատվության մեջ դրամական մեծությունները ներկայացվում են ավելացված արժեքի հարկը ներառյալ:
4. Տեղեկատվության 3-րդ, 4-րդ և 5-րդ սյունակներում նշվում է խմելու ջրի մատակարարման համակարգերից խմելու ջրի ապօրինի սպառման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) համակարգերի ապօրինի օգտագործման փաստի վերաբերյալ արձանագրության տվյալները: